

ՆԱՆԱՐ ՄԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԱՊԵՆՑ ԳՐՈՂՆ ՈՒ ԳԵՂԱԳԵՏԸ*

Բանալի բառեր՝ գրական ժառանգություն, փիլիսոփայական հարցումներ, էկզիստենցիալիստական մտածողություն, արդիապաշտություն, աքսոր, համաշխարհային գրականություն, անկատար, խոսք:

Հակոբ Կարապենցն իր գրական հարուստ ժառանգության (պատմվածք, վիպակ, վեպ, փորձագրություն) ժանրային սահմաններում վերականգնել է իմացական խոսքի սրությունն ու այժմեական նպատակասլաց բարձր ընթացքները: Նրա ստեղծագործությունն ամբողջապես փիլիսոփայական հարցումների դիմաց պատասխանների փնտրտուք է, ինչպես խոստովանում է ինքը «Բառի փրկությունը» կարճառոտ փորձագրության մեջ 1986-ի սեպտեմբերին. «Գրում եմ, որովհետև կեանքը ո՛չ կատարեալ է, ո՛չ էլ արդար: Գրելով փորձում եմ գտնել ճիշդ հարցումը, երբեմն էլ՝ պատասխանը: Գրելով ջանում եմ փրկել ինձ, ապա՝ մարդուն»: (1)

Հակոբ Կարապենցին կարելի է և պետք է արժևորել, նախ, էկզիստենցիալիստական (գոյապաշտական) գեղարվեստական մտածողության շրջանակում: Ավանդույթի բերած կաշկանդումների դիմաց գրողական «փրկության ճանապարհին» գոյապաշտները նախընտրում են «բացարձակ ազատության կարգախոսը», ինչի հետևանքով համաշխարհային գետնի վրա արդեն «գոյապաշտությունը խորտակել էր ամբարտակները: ...Յոյսից առաւել,- եզրակացնում է Հ. Կարապենցը,- նրանց ենթադաշտը գաղափարներն են՝ արտայայտուած մերթ իրապաշտ, մերթ վերացապաշտ գոյներով, սակայն միշտ մնալով գիտակցականի ու ենթագիտակցականի միջև ընկած ծիրում»: (2)

Գրական հետաքրքրության երկրորդ, սակայն ծննդաբանական գործոնով առաջինի հետ առարկայական ու տեսանելի, սերտորեն առնչված նրա դաշտն արդիապաշտ ուղղության ակունքն էր: Նրա հայկական սահմանների գլուխ ամերիկահայ արձակագիրը կարգում էր Հակոբ Օշականին՝ որպես գրական բարձր երևույթ, որպես իրական համակշիռ Ջեյմս Ջոյսին: (3) Ի դեպ, արդիապաշտության լայնահուն ճանապարհը նա բերում է շարժման հայկական նոր գետին զուգընթաց, թեև ընդունում է, որ մեր յուրացումն ամբողջական չէ, գետը հորդառատ չէ կարծես:

«Արդիապաշտ շարժումն իր բազմաթիւ հակասական, յաճախ անկեղծ, երբեմն մակերեսային, նոյնիսկ իրերամերժ հոսանքներով,- գրում է նա,- ամբողջ գրեթէ երկու դար Արեւմտեան Աշխարհը ողողելուց յետոյ վերջապէս հասել է մեր ափերը: Դեռ ցամաք չի մտել, մնացել է լուսանցքում: Իր մտաւոր ու իմացական հիմքերը դասականութեան ծովում խառնաձուլ լինելով հանդերձ՝ Յակոբ Օշականը

*Հոդվածն ընդունվել է 14.10.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել «Գրիգոր Նարեկացի» համալսարանի գրականության ամբիոնը:

հանդիսացաւ հայ նորագոյն գրականութեան արդիապաշտ ուղղութեան ռահվիրան թէ՛ որպէս ձեւ եւ թէ՛ որպէս բովանդակութիւն»։ (4) Իսկ ահա ազգային գրականության նորագոյն զարգացումներուն «ամենից հաւատացեալ» արդիապաշտների շարքում Կարապետը տեսնում էր Վահե Օշականին, Գրիգոր Պըլտյանին ու իրեն։ Պատահական չէր, ըստ իր «չափումի», անձամբ իր հայտնությունը նրանց և ուրիշ այլ արդիապաշտ գրողների դիրքում, ինչը փորձում էր հաստատել գեղագիտական ընդհանրացումների իր փորձով և արձակ գործերի ժանրային բնութագրումների սուր հակվածությամբ, երբ, օրինակ, ոչ առանց միտումի, իր երկու ծրագրային վեպերը՝ «Կարթագենի դուստրը» և «Ադամի գիրքը», հայտարարում էր «ժամանակակից», որն իր համար արդեն արդիապաշտության ընդգծված հոմանիշն էր։ «Ես էլ արդիապաշտական փորձեր արել ու անում եմ, երբ նյութի զարգացումն այդ է պահանջում,- գրում է նա։ - Օրինակ՝ երազի ու ներքին մենախոսության վերակերտումը կամ ենթագիտակցական հոսանքների վերարտադրումը, եթե հարազատ պիտի լինի, կետադրություն չի ճանաչում, ինչպես չի ճանաչում երևույթների, պատկերների ու մտորումների հերթականություն»։ (5)

Բնութագրիչ են հեղինակի սկեռուն դիտարկումները դարից ու մարդկանցից, անգամ ինքն իրենից խորթացման՝ «աքսորի» մասին «Քաղցրադառն» փորձագրության մեջ՝ գրված Քընեկթիքութուն անցյալ դարի ութսունականների երկրորդ կեսին. «Սակայն ինչպե՞ս ասեն բառը։ Ո՞ր բառը։ Կա՞յ բառը։ Կայ միայն աքսորը։ Կայ իմ աքսորը։ Կայ մարդու աքսորը։ Կայ քաղաքական աքսորը։ Կայ մարդ լինելու աքսորը։ Մարդու ներքին աքսորը։ Աքսորականների զանգուածն աքսորական աշխարհում։ Գիտեմ, որ ինքնախաբէութեան մէջ եմ ընկել, սակայն ուրիշ ելք չունեմ եւ այլեւս ես ես չեմ»։ (6) Նույն գրքում, բառի որոնման պատկերի իմաստավորումը մահվան ու աքսորի խաղարկումների շուրջպարի մեջ կրկնվում է։ Եվ կարևոր էլ չէ՝ հեղինակը որ հորձանքում է իրեն «հրաշալի» կամ «անկատար»՝ զգում՝ ամերիկյան թե՞ հայկական գոյավիճակների շուրջպարերում։ Չմոռանա՞նք. գիրքը հեղինակը ոչ պատահական զուգահիշությամբ կոչել է «Անկատար»։ Անկատարը կյանքն է, անկատար՝ երազը, քանի որ կատարյալին չի հասնում «բառը». հոգու «աքսորը» չի հաղթահարվում։ Կատարյալը «հոգեհանգիստն» է, ինչպես խորագրել է ծրագրային այս ժողովածուում հեղինակն իր այս վերջին խոհագրությունը. «Նորից կրկնուած խօսքեր, կրկնուած քաղաքներ, կրկնուած ցաւեր, որոնք կրկնուելով այլեւս բթացել են։ Դու երբեք չիմացար բացարձակը։ ...Բացարձակից այն կողմ ոչինչ կայ, որ բացարձակը է կամ չէ։ Ասա, կա՞յ բառը։ Եթէ չկայ, ինչպե՞ս ասել բառը։ Ճշմարտութեան մասին չէ խօսքը, այլ բանի, որ լինի ըստինքեան, որ լինի լինելութիւն»։ (7)

Խոսքը, ինչի մասին քանիցս համառորեն ակնարկում է նա, առարկայական չի թվում. խոսքը կամ բառն արվեստագետի համար միջավայրի ու անցյալի կենսական հանդիպադրումն է ազգային ու համազգային խաչուղիներում, խոսքը մարդու մեջ և գեղարվեստական հանգույցներում մարդկային տեղը ճշտորոշելու անդուլ գերխնդիրն է, ուր պատրաստի պատասխաններ չկան։

«Մարդկային տեղը», իբրև գեղարվեստական հանձնառություն, փոխում է արդեն 3. Կարապետի քննության ազգային անկյունագիծը դեպի մարդն առհասարակ. նա էլ դառնում է իր գրականության հավաքական հերոսը՝ լինի ամերիկացի թե հայ, արաբ թե թուրք, ինչը որևէ նոր բան չի փոխելու հարցադրումների ուղղության մեջ, այդտեղ ազգային գերակայություն կամ գնահատության գեղջում

չեք գտնի: Այդ առթիվ հստակ է նրա մոտեցման անակնկալ թվացող արդարամտությունը. «Այսօր կանգնած ենք 21-րդ դարի շեմին: Հայ գրականության սպասարկելուց առաջ՝ գրականության պետք է սպասարկել: Հայ լինելուց առաջ՝ մարդ պետք է լինել: Կրկնում ենք: Լեզուն ըստ ինքեան արդեն բնորոշում է ազգային պատկանելությունը: Եթե ամերիկահայ գրականությունը վաերական պիտի լինի, ապա այն պիտի արտացոլի ամերիկահայ ներկայ կեանքը, անկեղծօրեն ու համարձակօրեն ու նաեւ դաժանաբար» (8), ինչը, իհարկե, գրողին կարող է լիակատար հնարավորություն ընձեռել «ընթրիքի նստել օտարների հետ»: (9) Այստեղից է ծնունդ առնում համաշխարհային գրականության հետ նրա համաքայլ ընթացքի բուռն ձգտումը: Դրա մեջ մենք տեսնում ենք իր գրականության հանդեպ ներքին հպարտությունը: Թեպետ հեղինակը հաճախ ստեղծագործական դաշտում ներգրավել է ծագումով օտար կերպարների՝ «անծանոթ հոգիների», բայց միաժամանակ զգուշացնում է, թե երբևէ նպատակ չի ունեցել դիմելու օտարագրության գայթակղությանը, թեև, ինչպես վկայել է Մինաս Թյուլյույանը, «...անգլերենով հրատարակուող ամերիկեան հանդեսներու մէջ ունի բանաստեղծութիւններ, պատմութեան եւ գրական-գրադատական ակնարկներ»: (10) Նրա հերոսներն «օտարության» տառապանքը բաժանող մարդիկ են՝ անկախ ազգությունից, սակայն մի էական չափով՝ հայկական բնավորության գծերով:

Մեկ այլ դերակատարություն էր վերապահում Հ. Կարապետցը՝ սփյուռքահայ գրականության արժեւորմանը. այն դիտվում է ոչ միայն հայ, այլև իբրև համաշխարհային գրականության բաղկացուցիչ և ցուցիչ: Հ. Կարապետցը խոսքի ոճական նորարարության, յուրովի ասելաձևի կողմնակից է: Բարձր գնահատելով ազգային ու տոհմիկ գրականությունը նա ընդգծում է, որ հենց ազգայինից է գրողն անցնում համամարդկայինին: Այս առումով նկատում է, որ հայ կյանքը պատկերող հաջողված որևէ պատմվածք կամ վեպ արժանանում է համընդհանուր ուշադրության, եթե խորն է համամարդկային կենսահողը: Իսկ սփյուռքահայ գրականությունն այդ հարստությունը բանուկ դարձնելու ճանապարհին է, վստահեցնում է արձակագիրը:

«Ժամանակն է հասունութեան, մտքերի ու գաղափարների ազատ փոխանակման որդու ու մօր միջև» (11),- մի այլ առիթով գրում է արձակագիրը, որտեղ «որդի ու մայր» հարաբերությունը չի ենթադրում միայն Հայրենիք-Սփյուռք շերտերի կարգավորման նոր փորձ ութսունականների երկրորդ կեսին, այլ առավելաբար՝ ազգային և համաշխարհային քաղաքակրթությունների գրամշակութային փոխներթափանցումի հայեցակարգային պահանջ: Հ. Կարապետցի՝ գրականագետների նկատած «ուրույն աշխարհն» ամբողջացնում են «Անծանոթ հոգիներ» (Բեյրութ, 1970), «Նոր աշխարհի հին սերմնացանները» (Վաշինգթոն, 1975), «Միջնարար» (Նյու Յորք, 1981), «Ամերիկյան շուրջպար» (Նյու Յորք, 1986), «Անկատար» (Նյու Յորք, 1987), «Մի մարդ ու մի երկիր» (Ուոթերթաուն, 1994) պատմվածքների ժողովածուները, «Կարթագենի դուստրը» (Բեյրութ, 1972), «Ադամի գիրքը» (Նյու Յորք, 1983) վեպերը և «Երկու աշխարհ» փորձագրությունների ժողովածուն (Բոստոն, 1992):

Անցյալ դարի 70-80-ական թթ., մեկ տասնամյակի ընթացքում, Հ. Կարապետցը ընթերցողի սեղանին դրեց երկու վեպ՝ «Կարթագենի դուստրը» (1972) և «Ադամի գիրքը» (1983): Երկուսում էլ հեղինակի մտորումներն են ազգային ճակատագրի շուրջ: Առաջինն օտար «լուսանցքների» մեջ դեգերող հայկական միտքն է՝ «ավանդականից» խուսափուկ, բայց միշտ՝ նրա «միջանցքներից» կառչած: Երկ-

րորդում ազգային «վրիժառու հոգեբանության» շարունակական ընթացքների «արդար» (հայկական պատուհան) կամ «անարդար» (միջազգային ընկալման դիտանկյուն) նախահիմքերի քննության ճիգն է: Երկվություն, որ հակասական ժամանակի, ողբերգության ծնունդն է, երկվություն, որի մի բևեռում հայի մխացող ճակատագիրն է՝ իբրև ապրում ու գոյություն, մյուսում՝ Եղեռնի քաղաքական մոռացումի սարսուռը, աշխարհի անտարբերության գինը:

Յ. Կարապենցի ստեղծագործություններում հայկական կյանքը և մարդը փոխլրացնում են իրար տարաբնույթ և նույնակերպ երեսակներով, նրանք փորձում են գոյատևել համընդհանուր քաոսի մեջ, ճանաչել պատմությունն ու բնագոյը և դիմակայել ժամանակի քմայքներին:

Ծրագրում էր գրել «Աղամ երկրորդի գիրքը» վեպը, նույնիսկ, ինչպես վկայում էր մտերմագույն ընկեր, գրագետ Մարգար Շարաբխանյանը, «...զայն սկսած էր գրել...: Անոր մասին միայն կը խօսէր ինձի: Վեպ մը պիտի ըլլար ան, որ անկեղծ մօտեցումներով, իր իսկական կեանքն ու իր ապրած շրջապատը պիտի տար մեզի՝ իր թաքուն ծալքերով, առանց քողարկումներու: «Այս գրուելիք գրքիս մէջ անձս բզիք-բզիք պիտի անեն», - կըսէր ան յաճախ ինձի: Բայց ուրիշ գործերու նման այս «բզիք-բզիքն ալ չհասաւ գրելու: «Վաղուան գրելիքս աւելի կարելորդ էր լինելու», ըսաւ ու գնաց...: Ու ՎԱՂՆ ալ իր հետը տարաւ»: (12)

Նրա փորձագրություններում եռաշերտ կարգավորում կա՝ մարդը, հայը և աշխարհաքաղաքացին, ուր աչքի է ընկնում առաջին հերթին գրողի բերած գիտակից ու ենթագիտակից ճանաչողական ներհակությունը, այն, ինչ հեղինակը կոչում է լայն իմաստներով՝ գրականություն, որից փախուստ չկա իր համար, այն, ինչ զուգահեռի վրա պահում է գրողի հզոր ներաշխարհը:

Մեզանում Յ. Կարապենցին գնահատողների մեջ արժեք առանձնացնել Յրանտ Թամրազյանին, ով գրողի մահից մեկ տարի առաջ գրված «Կարապենցի աշխարհը» հոդվածում (13) փորձել է արժևորել գեղարվեստական վաստակը՝ շեշտը դնելով հիմնականում խնդիրների արծարծման տարբերությունների վրա: Նրա հայացքի մեջ «...Կարապենցը որոշ առումով տարբերվում է Սփյուռքի նախորդ գրողներից, որոնք ամբողջովին խորասուզված էին անցյալի հայ կյանքի և «մնացորդաց» թեմայի մեջ, նկատելի չափով էլ դիմադրում էին «օտար» թեմաներին...: Ավելի ճիշտ՝ արվեստագետը ձգտում է գտնել այն տեղը, որ գրավում են հայկական սերունդներն ամերիկյան իրականության մեջ, հետևում է կյանքի ընթացքին ու վերափոխումներին, բնականաբար, նաև նորագույն խաչաձևումներին»: (14)

Ընդհանրական գնահատության մեջ Յր. Թամրազյանն ունի ներթաքույց ենթախորք, որն ինչ-ինչ չափով փորձում է բացել Սարոյան-Կարապենց գրական առնչությունների ծալքերը: Բանն այն է, որ Վ. Սարոյանը Յ. Կարապենցին շարունակ հորդորում էր «բացուել» ընթերցողին անգլերեն, քանի որ հայերեն կարդացողները քիչ են: Այս առումով նկատենք գրող և հրապարակագիր Մարգար Շարաբխանյանի գրական «հիշողությունը». «Կարապենց, ճիշդ է որ ամերիկեան մամուլին մեջ փորձեր կատարած էր՝ օրուան պատշաճ քրոնիկներ ու կարճ պատմուածքներ ուղարկելով անոնց: Իսկ Յամաստեղ, որուն հանդէպ (Յ. Կարապենց – Ն.Ս.) մեծ հիացում ուներ, անընդհատ ու բուռն կերպով կը թելադրէր, Կարապենց չուտով անդրադարձաւ, թէ ինք հայ գրող էր, եւ թէ ամերիկեան գրականութիւնն իրեն պէտք չուներ, եւ ոչ ալ ինք ամերիկեան գրականութեան»: (15)

Պատահական չէ, որ Յայաստանի գրականագիտական միտքն առավել ջանասիրությամբ հակվում էր Յ. Կարապենցի ամերիկահայ հերոսների մեջ «կյանքի և

զուն» ու ոգին, կշռույթը, ընթացքը որսալու գրողական եղանակին: Հր. Թամրազյանը նրան է վերապահում մասնավորապես հայ «սերմնացանների կենսական ուժը, ...ցեղի հատկանիշները պահելու» (16) ներուժը՝ թեկուզ բնաշխարհից դուրս, թեկուզ Ամերիկայում, հայապահպան գլխավոր ուղղությունը, որն ինքը դիտում է իբրև «խորհրդավոր իրողություն»։ «Սակայն այսօր տեղի է ունենում մի ուրիշ երևույթ. հայրենիքից ու հողից հեռու՝ նրանք տարերայնորեն կազմում են նաև ինքնապաշտպանական բջիջներ, որոնք կարծես թե առնում են կենդանի մաս ու մարմին, համայնքների տարերքը ձևավորվում է այդ կենդանի բջիջներից՝ ստեղծելով պաշտպանական կայուն շերտերը: Անխաղախ գրիչը պատկերների մեջ հաստատում է այդ խորհրդավոր իրողությունը»։ (17) Հայ մնալու ցիլը, «տարերային ինքնապաշտպանական բջիջները», ինչպես նկատում է հայրենի գրականագետը, Նոր աշխարհում անգամ գալիս են ազգային հարատևող դյուցազնական, առասպելական շնչի շարունակական գիտակցությունից: Հ. Թամրազյանը ընդհանրացնում է. «Կարապենցին լիովին հաջողվում է արվեստի լեզվով խոսել և՛ Սփյուռքի, և՛ ամերիկյան կյանքի մասին: Նա կանգնած է մի մակարդակի վրա, որը բնավ չի գիշում ո՛չ ամերիկյան գրականության ժամանակակից որակին, ո՛չ էլ ժամանակակից հայ գրականության ճշմարիտ նվաճումներին»։ (18)

Բնականաբար, հայրենի գրականագետը «Կարապենցի աշխարհը» ծավալուն հոդվածում որոշակի օրինակների, ի մասնավորի՝ Հակոբ Ասատուրյանի հետ հայտնի գրական-համեմատական զուգահեռների մեջբերումով քննության է առնում ու հաստատում ամերիկահայ արձակագրի գրական ուղղության իրապաշտական խնդիրը. «Հակառակ ռոմանտիկների ընդգծված ոգևորությանը և լուսավոր գիշերների վեհափառ խնդության ներբողներին,- եզրակացնում է հոդվածագիրը,- նա իրապաշտ սկզբունքներ է պաշտպանում»։ (19) Տրամաբանական է նրա նաև այն դիտարկումը, թե «Հակոբ Կարապենցի աշխարհն ավելի բազմերանգ է և ունի ուրույն զարգացում»։ (20)

Նկատենք, որ կյանքի վերջին ամիսներին Հակոբ Կարապենցը բավական կարճ գրությամբ արձագանքում է Հրանտ Թամրազյանին՝ կատարելով իր՝ վաղուց երազված ուշագրավ մի փափագ-խոստովանությունը, թե լավ կլիներ, եթե պատվարժան գրականագետն ստանձներ իր մասին «...աշխատասիրութիւնը որպէս առանձին գիրք ներկայացնել, կամ որպէս լուրջ առաջաբան ներառել իմ հատընտիր (Երեւանում (ի դեպ, արևելահայ լեզվատրամաբանությամբ կառուցված այս փոքրիկ գրության վերատպության մեջ առկա է արևմտահայ մտքի տեսակետից՝ անհայտ վրեպ. պիտի լինի՝ - «Երեւանի մէջ» - Ն.Ս.) հրատարակուելիք) հատորին մէջ»։(21) «Ո՛չ մի առարկութիւն չունեն այս տարբերակի նկատմամբ: Փաստօրէն, սքանչելի վերլուծում է կարապենցեան գրական աշխարհի: Դեռ ոչ ոք այսքան հարազատ կերպով չի ներկայացրել իմ գրական ուղին, որքան Դուք»։ (22)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կարապենց Յ., Երկու աշխարհ / գրական փորձագրութիւններ, Ուոթըրթուն, Blue Crane Books, 1992, էջ 139:
2. Նույն տեղում, Երկու աշխարհ..., էջ 211:
3. Նույն տեղում, էջ 206:
4. Նույն տեղում, էջ 204:
5. Նույն տեղում էջ 272

6. Կարապենց Յ., Անկատար եւ այլ պատմութեան, Նիւ Եորք, «Ոսկետառ», 1987, էջ 203:
7. Նույն տեղում, էջ 245:
8. Կարապենց Յ., Երկու աշխարհ..., էջ 219:
9. Այդպես, ի դեպ, այլաբանական նշանառությամբ, կոչվում է օտարագիր ավագագույն արձակագիր Փ. Սուրյանի (ԱՄՆ) պատմվածքների ժողովածուն (Սուրյան Փ., Ընթրիք օտարների հետ, Եր., Լուսակն, 2010):
10. Թեյլօրեան Մ., Դար մը գրականութիւն (1920-1980) / Երկրորդ հատոր, Նիւ Եորք, «Ոսկետառ», 1977, էջ 422:
11. «Կարապենց» / մատենագիտութիւն, կազմեց եւ խմբագրեց՝ Արա Ղազարեանց, Մասաչուսեթս, 1999, էջ 64:- Տե՛ս՝ Կարապենց Յ., «Գրողը եւ իր գործը» կարճառոտ փորձագրությունը:
12. «Հորիզոն» / գրական, Մայիս, Մոնրէալ, 2017, թիւ 5 (393), Մայիս, ԼԳ. տարի, էջ 12:
13. «Հայաստանի Հանրապետութիւն» / օրաթերթ, թիւ 15 եւ 16 Յուլիս, Եր., 1993:- Տե՛ս՝ Թամրազյան Հր., «Կարապենցի աշխարհը» հոդվածը:
14. «Կարապենց» / մատենագիտութիւն, էջ 20:- Տե՛ս՝ Թամրազյան Հր., «Կարապենցի աշխարհը» ուսումնասիրությունը, էջ 20:
15. «Հորիզոն» / գրական, Մոնրէալ, 2017, թիւ 5 (393), Մայիս, ԼԳ. տարի, էջ 10:
16. Թամրազյան Հր., Գրական դիմանկարներ / հոդվածներ, հատոր Երկրորդ, Եր., «Նաիրի», 1998, էջ 180:
17. Նույն տեղում, էջ 181:
18. Նույն տեղում, էջ 178:
19. Նույն տեղում, էջ 186:
20. Նույն տեղում, էջ 178:
21. Տե՛ս՝ Թամրազյան Հր., Երկեր, Դ. հատոր, Եր., «Նաիրի», 2013, 943: Պետք է նկատի ունենալ Հր. Թամրազյանի քննադատական երկերի ստվարածավալ բառահատորյակի վերջին գրքի կառուցվածքի յուրահատկությունը. այստեղ կուտակված է կենսամատենագիտական վիթխարի գրականություն, որը ներառում է ոչ միայն գիտնականի աշխատասիրությունները, այլև հուշագրություն, հիշատակի խոսք, նաև իրեն ուղղված նամակների կամընտրական փըն-ջեր, որոնց թվում՝ Հ. Կարապենցի սույն նամակի չխմբագրված պատճենը:
22. Նույն տեղում:

ԱՄՓՈԹՈՒՄ

ԿԱՐԱՊԵՆՑ ԳՐՈՂՆ ՈՒ ԳԵՂԱԳԵՏՈՒ

ՆԱՆԱՐ ՍԻՄՈՆՅԱՆ

Սույն հոդվածում լուսաբանվում է 20-րդ դարի երկրորդ կեսի հայ արձակի նշանավոր դեմքերից մեկի՝ Հակոբ Կարապենցի գեղագիտական հայացքների մի շարք առանձնահատկություններ: Հոդվածագիրն ընդգծում է, որ գրողը պատմվածքի, վեպի, փորձագրության ժանրային սահմաններում վերակառուցել է իմացական խոսքի սրությունն ու բարձր ընթացքները: Կարապենցի ստեղծագործությունն ամբողջապես փիլիսոփայական հարցումների դիմաց պատասխանների փնտրտուքի փորձ է, ինչպես խոստովանում է ինքը «Բառի փրկությունը» կարճառոտ փորձագրության մեջ 1986-ին: Հակոբ Կարապենցին պետք է արժևորել հայկական էկզիստենցիալիստական մտածողության ու գրական փորձարարության շրջանակում:

РЕЗЮМЕ

КАРАПЕНЦ ПИСАТЕЛЬ И ЭСТЕТ
НАНАР СИМОНЯН

Ключевые слова: литературное наследие, философские исследования, экзистенциалистское мышление, модернизм, изгнанник, мировая литература, неполный, речь.

В этой статье рассматривается ряд особенностей эстетических взглядов Акона Карапенца – одного из выдающихся фигур армянской прозы 20-го века. Автор подчеркивает, что писатель реконструировал остроту и высокую поступь познавательной речи в жанровых границах рассказа, романа, литературной экспертизы.

Произведения Карапенца целиком являются попыткой поиска ответов на философские вопросы, как признается сам автор в краткой экспертизе "Спасение слова", опубликованной в 1986 - ом году. Акона Карапенца нужно оценивать в контексте армянского экзистенциального художественного мышления.

SUMMARY

KARAPENTS - THE WRITER AND THE ARTIST
NANAR SIMONYAN

Key words: literary heritage, philosophical inquiries, existentialist thinking, modernism, exile, world literature, imperfect, speech.

This article discusses a number of features of the aesthetic viewpoint of one of the prominent figures of the 20th century Armenian prose Hakob Karapenz. The author emphasizes that the writer has rebuilt the complexity and high course of cognitive speech in the genre boundaries of history, novel and essay. His work is totally an attempt to search for answers to philosophical inquiries as he confesses in his essay of "Word Safety" in 1986. Hakob Karapents must be appreciated in accordance with the Armenian existentialist thinking and literary experiments.